

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի մարդահամարի արդյունքները հրատարակվում են 9 գրքով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, 7 շրջաններ: Յուրաքանչյուր գիրք պարունակում է համապատասխան տեղեկություններ բնակչության թվաքանակի ու տարածքային բաշխվածության, ժողովրդագրական բնութագրերի, կրթական մակարդակի, սոցիալ-տնտեսական բնութագրերի, ազգային կազմի, միգրացիայի, տնային տնտեսությունների քանակի ու կազմի, բնակչության բնակության պայմանների վերաբերյալ:

Հրապարակման մեջ զետեղված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի մարդահամարի անցկացման համառոտ պատմությունը: Այն իր մեջ ներառում է նաև խորհրդային տարիներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում 1926-1989թթ. անցկացված մարդահամարների արդյունքներով բնակչության ազգային կազմի մասին աղյուսակը, անկախության պայմաններում անցկացված 2005 թվականի առաջին մարդահամարի արդյունքներով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային միավորների առկա և մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի և բնակավայրերի, 2015 թվականի մարդահամարի հարցաթերթը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված մարդահամարային փաստաթղթերի ցանկը, մարդահամարի ելքային աղյուսակները:

Հրապարակումը նախատեսված է հանրության լայն շրջանի համար: